ԵԱԴԴ/0047/04/16

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«27» ապրիլի 2017թ. ք. Երևան

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՋԱՓՆՅԱԿ ԵՎ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Նախագահությամբ դատավոր Գոռ Թորոսյանի
Քարտուղարությամբ Անի Շահնազարյանի

Մասնակցությամբ
դիմողի ներկայացուցիչ Վաչագան Հարությունյանի
պարտապանի ներկայացուցիչ Դավիթ Մամյանի

դռնբաց դատական նիստում, քննության առնելով քաղաքացիական գործն ըստ դիմումի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դատավարական նախապատմությունը
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Թորոսյանի 24.05.2016 թվականի որոշմամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի դիմումը՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ, իսկ 21.06.2016 թվականին «Նիտա Լայն» ՍՊԸ-ի սնանկության ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Արամ Մկրտչյանը:
Դատարանը դիմումը վարույթ ընդունելու մասին պատշաճ կերպով ծանուցում է ուղարկել «Նիտա Լայն» ՍՊԸ-ին՝ դիմումում նշված հասցեով և վերջինիս 15 օրյա ժամկետ տրամադրել՝ իր սնանկությունը գրավոր վիճարկելու համար, սակայն հնարավոր չի եղել նրան ծանուցել:
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2016 թվականի որոշմամբ պարտապանի, նրա գույքի, հաշվապահական և այլ փաստաթղթերի նկատմամբ հայտարարվել է հետախուզում ու նույն որոշմամբ գործի վարույթը կասեցվել է: Որոշման հիման վրա տրվել է համապատասխան կատարողական թերթ:
19.08.2016 թվականին դատարան է ստացվել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության 29.07.2016 թվականի կատարողական վարույթը ավարտելու մասին որոշումը, որի համաձայն՝ կատարված հարցումների արդյունքում պարտապանին պատկանող գույք կամ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է եղել պարզել պարտապան՝ Անուշ Հարությունյանի գտնվելու վայրը, որի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.08.2016 թվականի որոշմամբ թիվ ԵԱԴԴ/0027/04/15 քաղաքացիական գործի վարույթն ըստ դիմումի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին, վերսկսել է:
Պարտապանը 13.09.2016 թվականին դատարան է ներկայացրել գրավոր առարկություն:

2. Դիմումի հիմքերը, դիմողի փաստարկները և պահանջը.
Դիմողը նշել է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետ Ա. Գաբրիելյանի կողմից 25.08.2015 թվականին կայացվել է հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա

գումարը գանձելու մասին թիվ 97 որոշումը, որով որոշվել է «Նիտա Լայն» ՍՊԸ-ից հօգուտ պետական բյուջե 7,331,860 դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:
Որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկվել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն կատարման:
ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարողի 17.03.2016 թվականին որոշմամբ կատարողական վարույթն ավարտվել է:
18.04.2016 թվականի դրությամբ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի պարտավորությունը պետական բյուջեի հանդեպ կազմում է 8,745,078 ՀՀ դրամ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 87-րդ հոդվածներով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 11-րդ հոդվածներով և դիմողը խնդրել է պարտապան «Նիտա Լայն» ՍՊԸ-ին ճանաչել սնանկ:

3. Պարտապանի դիրքորոշումը
Պարտապան «Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը 13.09.2016 թվականին դատարան է ներկայացրել գրավոր առարկություն՝ նշելով, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերը բացակայում են, ուստի խնդրել է դիմումատուի պահանջը մերժել:
Դատական նիստի ընթացքում «Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը դատարան է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում՝ նշելով, որ դիմողի կողմից դատարան է ներկայացվել գրություն, որի համաձայն «Նիտա Լայն» ՍՊԸ-ի պարտավորությունը պետական բյուջեի հանդեպ՝ 18.04.2016 թվականի դրությամբ կազմում է 8,745,078 ՀՀ դրամ: Նշված պարտավորությունը գոյացել է 2013 թվականի հունվարից մինչև 2016 թվականի ապրիլի 18-ը ընկած ժամանակահատվածում:
Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 333-րդ հոդվածները, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը դատարանին խնդրել է դիմումատուի կողմից «Նիտա Լայն» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումում նշված և հաշվարկված պարտավորության գումարի մեջ ներառված՝ մինչև 2015 թվականի նոյեմբերի 10-ը առաջացած պարտավորությունների նկատմամբ կիրառել հայցային վաղեմություն և մերժել դիմումատուի պահանջը:

«Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը դատարան է ներկայացրել առարկության լրացում՝ նշելով, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.08.2015 թվականին կայացված որոշումը չի կարող հանդիսանալ պարտապանին սնանկ ճանաչելու հիմք, իսկ նշված հիմքով ծագած պարտավորությունը չի կարող համարվել անվիճելի՝ նույնիսկ օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց և ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից այն կատարելն անհնարին կինելուց հետո:
«Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը նշել է նաև, որ դիմումում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն նշել է, որ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի պարտավորությունը պետական բյուջեի հանդեպ 18.04.2016 թվականի դրությամբ կազմում է 8,745,078 ՀՀ դրամ, սակայն չի ներկայացրել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի մաս 2-ի ա/ ենթակետով նախատեսված՝ պարտատիրոջ դրամական պահանջի չափի, պարտքի, վնասների, տուժանքի չափերի համապատասխան հաշվարկները, չի նշել նույն հոդվածի նույն մասի բ/ ենթակետով նախատեսված պարտավորության կամ դրա մասի կատարման ժամկետները, դիմումին կցել է միայն «Նիտա Լայն» ՍՊԸ-ի 2011 թվականի շահութահարկի հաշվարկի պատճենը, սակայն նույն հոդվածի մաս 3-ի բ/ ենթակետի համաձայն պետք է կցեր իրավաբանական անձ հանդիսացող պարտապանի ներկայացրած վերջին ֆինանսական հաշվետվությունները:
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտատիրոջ պահանջի ըստ դիմումի վերաբերում է 2016 թվականի դրությամբ ԱԱՀ, շահութահարկ և եկամտային հարկի գծով առաջացած պարտավորություններին, ապա միայն 2011 թվականի շահութահարկի հաշվետվությամբ հնարավոր չէ պարզել և հաշվարկել մատնանշված պարտավորությունների չափը:
Հիմք ընդունելով վերոգրյալը «Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը դատարանին խնդրել է դիմումատուի պահանջը մերժել:
«Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը դատարան է ներկայացրել առարկությանների լրացում՝ նշելով, որ սույն գործի քննության համար էական նշանակություն ունեն դիմումատուի կողմից դիմում ներկայացնելու պահը և

դրանում մատնանշված պարտավորությունների ծագման ժամանակը:
«Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը, վկայակոչելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը նշել է, որ պարտավորությունները առկա են եղել դեռևս 2014 թվականին, սակայն պարտատերը՝ պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարան դիմելու՝ օրենքով սահմանված ժամկետը բաց է թողել: Իսկ 2015 թվականի հոկտեմբեր ամսից մինչև դիմումատուի կողմից դիմումը ներկայացնելու օրը ընկերության կողմից ձևավորված պարտավորությունները պետական բյուջեի հանդեպ չեն գերազանցում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:
Հիմք ընդունելով վերոգրյալը և «Նիտա Լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը դատարանին խնդրել է մինչև 2015 թվականի հոկտեմբերի 10-ը առաջացած պարտավորությունների մասով պարտատիրոջ «Նիտա Լայն» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջը մերժել՝ կիրառելով հայցային վաղեմություն:
Խնդրել է նաև 2015 թվականի հոկտեմբերի 10-ից միչև 2016 թվականի մայիսի 10-ն առաջացած պարտավորությունների մասով պարտատիրոջ՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջը մերժել, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:
4. Դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.
Դիմումի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.
1.18.04.2016 թվականի տեղեկանքի համաձայն՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի պարտավորությունը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նկատմամբ 18.04.2016 թվականի դրությամբ կազմում է 8,745,078 ՀՀ դրամ գումար:
2.ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացուցչի գրության համաձայն՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի պարտավորությունները պետական բյուջեի գծով 18.04.2016 թվականի դրությամբ կազմել է 8,745,078 դրամ, որից՝ ԱԱՀ-ի գծով 3,283,760 դրամ, շահութահարկի գծով՝ 4,131,936 դրամ, եկամտային հարկի գծով՝ 1,329,382 դրամ: ԱԱՀ-ի գծով պարտավորությունն առաջացել է 2013 թվականի դեկտեմբեր ամսվա հաշվարկից և դրա նկատմամբ հաշվարկված տույժից և տուգանքից, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:
Շահութահարկի գծով պարտավորությունն առաջացել է 2013 թվականի տարեկան վերահաշվարկից և դրա նկատմամբ հաշվարկված տույժից և տուգանքից, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ: Եկամտային հարկի գծով պարտավորություններն առաջացել են 2013 թվականի դեկտեմբեր-2016 թվականի դեկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկներից և դրանց նկատմամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն հաշվարկված եկամտային հարկը բյուջե է վճարվում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:
3. 25.08.2015 թվականի հարկ վճարոհից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին որոշման համաձայն՝ 25.08.2015 թվականի դրությամբ քննարկելով «Նիտա Լայն» ՍՊԸ-ի չկատարած հարկային պարտավորությունները կազմում է 7,331,860 դրամ, որից եկամտային հարկի գծով՝ 1,329,382 դրամ (առաջացել է 2013 թվականի դեկտեմբեր, 2014 թվականի հունվար-հունիս ամիսների հաշվարկներից), ԱԱՀ-ի գծով՝ 3,277,415 դրամ (առաջացել է 2013 թվականի դեկտեմբեր-2014 թվականի ապրիլ ամիսների հաշվարկներից), շահութահարկի գծով՝ 2,725,063 դրամ (առաջացել է 2014 թվականի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 2015 թվականի 1-ին, 2-րդ եռամսյակների կանխավճարներից), որը ենթակա է գանձման: Գանձման ենթակա չկատարած պարտավորությունների նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և տուգանքներ: Վերոնշյալի հիման վրա որոշել է «Նիտա Լայն» ՍՊԸ-ից գանձել 7,331,860 դրամ:
4.ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարող Սերգեյ Հարությունյանի 17.03.2016 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն՝ 25.08.2015 թվականին կայացված թիվ 97 որոշման համաձայն՝ պետք է «Նիտա Լայն» ՍՊԸ-ից հօգուտ պետ. բյուջեի բռնագանձել 7,331,860 ՀՀ դրամ: Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան ընկերության տնօրենը չի հայտնաբերվել և նրա և ընկերությանը պատկանող գույքի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Վերոնշյալի հիման վրա և ղեկավարվելով ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 28 և 41.1.2.1 հոդվածներով՝ որոշել է ավարտել 11.12.2015 թվականին հարուցված թիվ 01659259 կատարողական վարույթը:

5. Դատարանի իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

Դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է որ դիմումն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.
«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն):
Նշված դրույթի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար անձին սնանկ ճանաչելու համար: Վճարային պարտավորության անվիճելիությունը առկա է այն դեպքում, երբ պարտապանը չի առարկում սնանկ ճանաչելու պահանջի դեմ: Այդուհանդերձ, օրենքի վերոնշյալ դրույթը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը, այլ կերպ ասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Նման պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «դ» ենթակետի համատեքստում: Մասնավորապես՝ այն պարտավորությունը, որը վիճարկվում է պարտապանի կողմից կամ որի դեմ պարտապանը ներկայացրել է առարկություն, անվիճելի է, եթե այդպիսի առարկությունն ուղղված է պահանջի մի մասի դեմ, իսկ մնացած մասը չի վիճարկվում: Այլ կերպ՝ չվիճարկվող մասը, եթե այն գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, անվիճելի է դարձնում պարտավորությունն առնվազն այդ մասով (տես թիվ ԵՇԴ/0009/04/12 գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 05-ի որոշումը):
Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել երկու պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.
1.պարտապանը պետք է թույլ տված լինի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց,
2.վճռի կայացման պահին նշված կետանցը պետք է շարունակվի (տես թիվ ՀՔԴ/0024/04/08 գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը):
«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով (այդ թվում՝ հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարումների գծով) համապատասխան իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարտապանին սնանկ ճանաչելու նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում պարտավոր են պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դիմել դատարան հետևյալ դեպքերում և ժամկետներում՝ լիազորված պետական համապատասխան մարմինը՝ հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքերի գծով վճարումն ուշացնելու դեպքում պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում:
«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում, պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում, պարզվում է, որ այդ գույքն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը

պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան:
«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված պետական մարմինների սահմանված ժամկետում սնանկության դիմում չներկայացնելու դեպքում դրանք ներկայացնում են դատախազության մարմինները՝ նույն օրենքով սահմանված կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է տվյալ անձին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելուց ձեռնպահ մնալու մասին կառավարության որոշումը:
«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձինք նույն հոդվածում նախատեսված դեպքերում և ժամկետում պարտապանին սնանկ ճանաչելու դիմում չներկայացնելու դեպքում անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:
Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց թույլ տալու, և նշված կետանցը շարունակվելու դեպքում («Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում) որպես Հայաստանի Հանրապետության կամ համայնքի գույքային շահերի պաշտպանության առաջնային միջոց օրենսդիրը նախատեսել է տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելը:
Օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու՝ որպես պետության գույքային շահերի պաշտպանության միջոցի առաջնայնությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ տնտեսվարող սուբյեկտին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելը, իրավասու պետական համապատասխան մարմնի կամ համայնքի ղեկավարի պարտականությունն է, որը չկատարելու դեպքում այդ պարտականությունը պետք է կատարի դատախազությունը, և որը չկատարելու համար նշված մարմինների իրավասու պաշտոնատար անձինք անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի համար (տես թիվ ՇԴ/0743/02/12 գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հուլիսի 18-ի որոշումը):
Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հարկադրված սնանկության դեպքում պարտապանը սնանկ է ճանաչվում, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Ընդ որում, օրենսդիրը, ամրագրելով, որ վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, միաժամանակ սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում նույնիսկ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում պարտավորությունն անվիճելի է: Այդ հիմքերն են՝
-երբ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,
-երբ պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),
-երբ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),
-երբ պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:
ՀՀ սահմանադրական դատարանը, 25.02.2008 թվականի թիվ ՍԴՈ-735 որոշմամբ անդրադառնալով <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի իմաստով <<անվճարունակություն>> հասկացությանը, նշել է որ <<անվճարունակությունը>> մի վիճակ է, երբ պարտապանն ընդհանուր առմամբ անկարող է վճարելու իր պարտքերը՝ պարտավորությունները կատարելու համար նախատեսված ժամկետներում, կամ երբ պարտապանի

պարտավորությունների ընդհանուր գումարը գերազանցում է նրա ակտիվների արժեքը: Այսինքն՝ անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքը հիմնվում է <<անվճարունակության կանխավարկածի>> վրա, այն է՝ եթե պարտապանն ի վիճակի չէ կատարելու ժամկետանց վճարային պարտավորությունները, ապա ի սկզբանե ենթադրվում է, որ նա փաստացիորեն անվճարունակ է, և այդ ենթադրությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ ժամկետանց պարտավորությունը չի կատարվել կամ վիճարկվել ու հերքվել: Ընդ որում, <<անվճարունակության կանխավարկածն>> իր հերթին հիմնվում է պարտապանի <<բարեխղճության և պարտաճանաչության կանխավարկածի>> վրա, այսինքն՝ եթե պարտապանը չի կատարում իր պարտավորությունները, ապա ի սկզբանե պարտավորության չկատարումը բացատրվում է ոչ թե նրա անբարեխղճությամբ, այլ վճարում կատարելու կարողության բացակայությամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ելնելով անձին սնանկ ճանաչելու տարբեր հիմքերի առանձնահատկություններից՝ օրենսդիրն անձին սնանկ ճանաչելու յուրաքանչյուր հիմքի համար սահմանել է տարբեր կարգավորումներ: Այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե սնանկության դիմումի հիմքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված որ հիմքն է ընկած, կիրառվում է տվյալ հիմքին բնորոշ օրենսդրական կարգավորումը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը, այն է՝ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունենալու հանգամանքը (ներառյալ՝ պահանջի հաշվանցը), ապա համապատասխան իրավասու պետական մարմինը պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել, եթե հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքերի գծով վճարումն ուշացվում է: Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումն իրավասու պետական մարմինը պետք է ներկայացնի պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում: Միաժամանակ օրենսդիրը սահմանել է, որ պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում համապատասխան պետական մարմինների կողմից սնանկության դիմում չներկայացվելու դեպքում անձին սնանկ ճանաչելու դիմումը ներկայացնում են դատախազության մարմինները՝ նույն օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ըստ էության օրենսդիրը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանելով սնանկության դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակում, միաժամանակ նախատեսել է նաև դրա խախտման հետևանքները՝ մի դեպքում՝ սնանկության դիմում ներկայացնելու իրավունքը վերապահելով այլ պետական մարմնին՝ դատախազությանը, մյուս դեպքում՝ սահմանելով համապատասխան պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվություն ժամկետի խախտման հետևանքով Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ վերապահված պարտականությունների՝ սահմանված ժամկետում չիրագործումն ինքնին չի հանգեցնում պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի վերացմանը, այլ պարտապանին սնանկ ճանաչելու իրավունքը փոխանցվում է պետական այլ մարմնին՝ դատախազությունը, որպիսի պայմաններում իրավասու պետական մարմինը դադարում է լինել պատշաճ դիմող: Ընդ որում, վերոգրյալ իրավական վերլուծությունները վերաբերում են միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված հիմքին:

Մինչդեռ օրենսդիրն այլ կարգավորում է սահմանել այն դեպքերի համար, երբ սնանկության դիմումի հիմքում դրված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը: Այսպես՝ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, իսկ պարտապանը ողջամիտ ժամկետում չի կատարում այդ վճռից բխող իր պարտավորությունը, ապա պարտատերն իրավասու է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու երկու եղանակով, այն է՝ կա՛մ սնանկության դիմումով դիմել դատարան, կա՛մ օրենքով սահմանված ժամկետում օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնել հարկադիր կատարման: Ընդ որում, այն դեպքում, երբ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարզվում է, որ գույքը բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ)

հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան:
Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության հիմքում դրված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, ապա պարտատերը սնանկության դիմումը դատարան պետք է ներկայացնի վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված կարգով կատարման ներկայացնելու ժամկետի սահմաններում:
Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելու դեպքում տվյալ վճռից բխող իրավունքներն ու պարտականությունները ենթակա չեն իրականացման:
ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությանը՝ որպես անձին սնանկ ճանաչելու հիմքին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ պարտապանից գումար պահանջելու և հետագայում սնանկ ճանաչելու պարտատիրոջ իրավունքի ծագման հիմքում ընկած է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, և նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չի ներկայացվում, պարտատերը զրկվում է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից: Նշվածի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի <<ա>> ենթակետով պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը բացակայում է (տե՛ս, «Արդշինբանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Արոր-Բագրատ» արտադրական կոոպերատիվի թիվ ՀՔԴ4/0024/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը):
Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ այն դեպքում, երբ սնանկ ճանաչելու վճռի հիմքում դրված է Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորությունների (այդ թվում՝ հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարումների գծով) կատարմանը պարտավորեցնող՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը չի կարող կիրառվել: Այլ կերպ ասած՝ պահանջատեր հանդիսացող պետական կամ համայնքային մարմինը կաշկանված չէ վեցամսյա ժամկետով, և նշված ժամկետում նրա լիազորությունների չկատարումը չի ենթադրում հայց հարուցելու իրավունքի փոխանցում դատախազությանը:
Ամփոփելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով սնանկության դիմումը քննելիս դատարանները պետք է նախևառաջ պարզեն սնանկության դիմումի հիմքում ընկած՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայությունը, որից հետո միայն բացահայտեն համապատասխան հիմքի (հիմքերի) հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հիմքի համար օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորումները (տես թիվ ԿԴ2/0078/04/14 գործով Վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 02-ի որոշումը):
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրողը:
Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:
Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման

պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (տե՛ս, Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Սարգսյանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):
Սույն գործի փաստերի, մասնավորապես, 18.04.2016 թվականի տեղեկանքի համաձայն՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի պարտավորությունը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նկատմամբ 18.04.2016 թվականի դրությամբ կազմում է 8,745,078 ՀՀ դրամ գումար:
ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացուցչի գրության համաձայն՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի պարտավորությունները պետական բյուջեի գծով 18.04.2016 թվականի դրությամբ կազմել է 8,745,078 դրամ, որից՝ ԱԱՀ-ի գծով 3,283,760 դրամ, շահութահարկի գծով՝ 4,131,936 դրամ, եկամտային հարկի գծով՝ 1,329,382 դրամ: ԱԱՀ-ի գծով պարտավորությունն առաջացել է 2013 թվականի դեկտեմբեր ամսվա հաշվարկից և դրա նկատմամբ հաշվարկված տույժից և տուգանքից, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Շահութահարկի գծով պարտավորությունն առաջացել է 2013 թվականի տարեկան վերահաշվարկից և դրա նկատմամբ հաշվարկված տույժից և տուգանքից, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ: Եկամտային հարկի գծով պարտավորություններն առաջացել են 2013 թվականի դեկտեմբեր-2016 թվականի դեկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկներից և դրանց նկատմամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն հաշվարկված եկամտային հարկը բյուջե է վճարվում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:
25.08.2015 թվականի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին որոշման համաձայն՝ 25.08.2015 թվականի դրությամբ քննարկելով «Նիտա Լայն» ՍՊԸ-ի չկատարած հարկային պարտավորությունները կազմում է 7,331,860 դրամ, որից եկամտային հարկի գծով՝ 1,329,382 դրամ (առաջացել է 2013 թվականի դեկտեմբեր, 2014 թվականի հունվար-հունիս ամիսների հաշվարկներից), ԱԱՀ-ի գծով՝ 3,277,415 դրամ (առաջացել է 2013 թվականի դեկտեմբեր-2014 թվականի ապրիլ ամիսների հաշվարկներից), շահութահարկի գծով՝ 2,725,063 դրամ (առաջացել է 2014 թվականի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 2015 թվականի 1-ին, 2-րդ եռամսյակների կանխավճարներից), որը ենթակա է գանձման: Գանձման ենթակա չկատարած պարտավորությունների նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և տուգանքներ: Վերոնշյալի հիման վրա որոշել է «Նիտա Լայն» ՍՊԸ-ից գանձել 7,331,860 դրամ:
ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարող Սերգեյ Հարությունյանի 17.03.2016 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն՝ 25.08.2015 թվականին կայացված թիվ 97 որոշման համաձայն՝ պետք է «Նիտա Լայն» ՍՊԸ-ից հօգուտ պետ. բյուջեի բռնագանձել 7,331,860 ՀՀ դրամ: Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան ընկերության տնօրենը չի հայտնաբերվել և նրա և ընկերությանը պատկանող գույքի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Վերոնշյալի հիման վրա և ղեկավարվելով ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 28 և 41.1.2.1 հոդվածներով՝ որոշել է ավարտել 11.12.2015 թվականին հարուցված թիվ 01659259 կատարողական վարույթը:
Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունները՝ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հաստատվում է պարտապանի՝ 1,000,000 ՀՀ դրամի գերազանցող 60-օրյա կետանցով պարտավորության առկայությունը: Միաժամանակ դատարանն արձանագրում է, որ սույն գործով նշված պարտավորության անվիճելիությունը հաստատվում է անբողոքարկելի դարձած 25.08.2015 թվականի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին որոշմամբ, որը, ինչպես նաև դրանից հետո կազմված տեղեկանքը դրվել են պարտավորությունների հաշվարկի հիմքում:
Հետևաբար դատարանը եզրակացնում է, որ սույն գործով առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հատկանիշները «Նիտա Լայն» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու համար:

Անդրադառնալով պարտապանի ներկայացուցչի՝ հայցային վաղեմություն կիրառելու առարկությանը, ինչպես նաև այն փաստարկներին, որ դիմողի կողմից դատարան է ներկայացվել գրություն, որի համաձայն «Նիտա Լայն» ՍՊԸ-ի

պարտավորությունը պետական բյուջեի հանդեպ՝ 18.04.2016 թվականի դրությամբ կազմում է 8,745,078 ՀՀ դրամ: Նշված պարտավորությունը գոյացել է 2013 թվականի հունվարից մինչև 2016 թվականի ապրիլի 18-ը ընկած ժամանակահատվածում և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 333-րդ հոդվածները, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ «Նիտա Լայն» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մամյանը դատարանին խնդրել է դիմումատուի կողմից «Նիտա Լայն» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումում նշված և հաշվարկված պարտավորության գումարի մեջ ներառված՝ մինչև 2015 թվականի նոյեմբերի 10-ը առաջացած պարտավորությունների նկատմամբ կիրառել հայցային վաղեմություն և մերժել դիմումատուի պահանջը, դատարանն արձանագրում է, որ պարտապանի ներկայացուցչի կողմից նշված պարտավորության ծագման հիմքում, ինչպես դատարանը վերևում արձանագրել է, դրվել է 25.08.2015 թվականի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին որոշումը, որը դարձել է անբողոքարկելի, հետևաբար դատարանը, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ Սահմանադրության ուժով վարչական ակտի չվիճարկման պայմաններում յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված վարչական մարմնի լիազորությունների շրջանակում, և այն ենթակա է կատարման: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ չվիճարկված վարչական ակտն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը (տե՛ս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը, տես նաև թիվ ՎԴ/4109/05/14 գործով Վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 02-ի որոշումը), գտնում է, որ սույն դեպքում պետք է ելնել նշված վարչական ակտի իրավաչափության կանխավարկածից, ինչպես նաև կատարման ենթակա լինելու հատկանիշից:

Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ պարտապանի կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 333-րդ հոդվածները սույն գործով կիրառելի չեն, քանի որ հայցային վաղեմության վերաբերյալ քաղաքացիական օրենսդրության նորմերը չեն կարող կիրառվել հարկային պարտավորությունների գանձման վաղեմության հարցը քննարկելիս, բացի այդ, անկախ նշված հանգամանքից, սույն գործով անբողոքարկելի դարձած վարչական ակտի առկայության պայմաններում դատարանը ելնում է նշված ակտի իրավաչափության և կատարելիության կանխավարկածից, հետևաբար պարտապանի նշված փաստարկը հիմք չէ սույն գործով դիմումը մեժելու համար:

Անդրադառնալով պարտապանի ներկայացուցչի այն փաստարկին, որ պարտավորությունները առկա են եղել դեռևս 2014 թվականին, սակայն պարտատերը՝ պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարան դիմելու՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ մասով սահմանված ժամկետը բաց է թողել, իսկ 2015 թվականի հոկտեմբեր ամսից մինչև դիմումատուի կողմից դիմումը ներկայացնելու օրը ընկերության կողմից ձևավորված պարտավորությունները պետական բյուջեի հանդեպ չեն գերազանցում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, դատարանն արձանագրում է, որ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի՝ վերևում նշված դիրքորոշումները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անբողոքարկելի վարչական ակտերի համար «Դատական ակտերի հարկադիր կատարման» մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 7-րդ մասի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախատեսվում է հարկադիր կատարման կարգ, դատարանը հաշի առնելով սույն գործի առանձնահատկությունները, մասնավորապես, որ 25.08.2015 թվականի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին որոշման համաձայն՝ 25.08.2015 թվականի դրությամբ քննարկելով «Նիտա Լայն» ՍՊԸ-ի չկատարած հարկային պարտավորությունները կազմում է 7,331,860 դրամ, իսկ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարող Սերգեյ Հարությունյանի 17.03.2016 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն՝ 25.08.2015 թվականին կայացված թիվ 97 որոշման համաձայն՝ պետք է «Նիտա Լայն» ՍՊԸ-ից հօգուտ պետ. բյուջեի բռնագանձել 7,331,860 ՀՀ դրամ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան ընկերության տնօրենը չի հայտնաբերվել և նրա և ընկերությանը պատկանող գույքի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Վերոնշյալի հիման վրա և ղեկավարվելով ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 28 և 41.1.2.1 հոդվածներով՝ որոշել է ավարտել 11.12.2015 թվականին հարուցված թիվ 01659259 կատարողական վարույթը, դատարանը գտնում է, որ սույն գործով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի սահմանափակումները կիրառելի չեն, քանի որ պետական իրավասու մարմինը,

սույն գործով դիմողը, սահմանված կարգով անբողոքարկելի վարչական ակտը ներկայացրել է հարկադիր կատարման, հարկադիր կատարողի կողմից հարուցվել է կատարողական վարույթ, որն ավարտվել է հարկադիր կատարողի 17.03.2016 թվականի որոշմամբ, որից մոտ երկու ամիս հետո ներկայացվել է սնանկ ճանաչելու դիմումը: Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ պարտապանի ներկայացուցչի վերոնշյալ փաստարկը նույնպես սույն գործով չի կարող հիմք հանդիսանալ սնանկության դիմումը մերժելու համար:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 17-րդ, 17.1-րդ, 20-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ, 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի դիմումը բավարարել:
«Նիտա Լայն» ՍՊԸ-ին ճանաչել սնանկ:
«Նիտա Լայն» ՍՊԸ -ից հօգուտ հայցվոր ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձվելիք 500,000 (հինգ հարյուր հազար) դրամ պետական տուրքի փոխհատուցման գումարը գրանցել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված դատական ծախսեր խմբում, որը պետք է մարվի պարտապանի միջոցներից:
Սույն վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:
Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել պարտապանի, պարտատիրոջ (պարտատերերի) կողմից Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ԹՈՐՈՍՅԱՆ